ԳԱՒԱՌԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

III.

Ծանօթացանք մեր վերանորոգող ընտանիքի մի քանի գծերի հետ. տեսանք որ նա աւագի վերայ հաստատած չինութիւն է։ Կը գտնուին մարդիկ, որոնք դժգոհ կը լինին այդ հարևանցի ծանօթութիւնից։ Անբաւականութիւնն ինքն ըստ ինքեան հասկանալի է. ինչպէս կարելի է վատ անուանել այն, ինչ որ զեղեցիկ, ցանկալի է ամբողջ աշխարհի համար. ուրեմն վատաբանում են լուսաւորութիւնը, քաղաքակրթութիւնը, վերանորոգութիւնը։ Իսկ սրանք այնպիսի զեղեցիկ, պաշտելի բառեր են... Կան մարդիկ, որոնք գժւում են այդ զեղեցիկ բառերի վերայ, հոդով ու մարմնով գերի ու ստրուկ են դառնում այդ բառերին. մինչև անգամ յանցանքներ են գործում նրանց պատճառով, գործում են և իրանց խիղճը հանդատացնում են նրանով, որ յանցանք գործել են լանուն և ի փառս լուսաւորութեան, քաղաքակրթութեան։ Ինչ որ ուզում է՝ թող լինի, միայն թէ մէջ տեղ լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն, յառաջադիմութիւն բառերը գործ ածին։ Դնենք թէ կեանքի մի որ և իցէ կողմը ապանդակութիւն կարելի է անուանել, բայց մի՞թէ հէնց այդ պատճառով պէտք է յետադիմել, զզուել լոյսից, փայլից, շնորհքից։ Այդպէս դատում են, այդպէս համոզւում և ականջ խցած, ոչ մի առարկութեան, ոչ մի բողոքի ուշադրութիւն չը դնելով, առաջ են վազում։ Անընկճելի ոյժ է առաջ վազելու ոյժը։ Կարելի է երեսի վերայ թողնել ծերացած հայր ու մայր, եթէ սրանք մի քիչ խանդարում են առաջ գնալիս. կարելի է երեխաներ քաղցած թողնել, կինը վերջին թշուառութեան հասցնել, եթէ սրանք ծանրանում են առաջ վազողի ուսերի վերայ, հարկադրում են երբեմն կանգ առնել, իրանց համար մտածել տալ։ Ժամանակն այս է պահանջում, համոզմունքը, հասկացողութիւնը անդադար կարդում են ականջի մէջ, որ պէտք է յետ չը մնալ։ Միայն այն է լաւ, ինչ որ սիրտ է ուրախացնում, զարճութիւն, զմայլութիւն է պատճառում, ինչ որ յարմար է մի թեթև և սիրուն կեանք վարելու համար, ինչ որ գեղեցիկ է, կոկ, լաստած, սիրունացրած։ Ցեսնել շուք և ղարդարանք, նստել փափուկ ու յարմար կառքերում, տեսնել մի անհոգ, զարճացող ամբոխ, տեսնել սիրուն թիթեռնիկ-

ների պէս դէպի ամեն կողմ սրացող գեղեցիկ արարածներին, խառնել մի աղմուկի, իրարանցումի մէջ, զգալ մի թեթև, զարթարար մենակութիւն, չ'իմանալ թէ ինչ է զրկանքը—ում չէ լայտնի, որ ժամանակակից կեանքի—և գեղեցիկ կեանքի—տենչալի պատկերը սա է։ Այս ասելով ես ի նկատի չ'ունիմ միայն մեծ քաղաքների կեանքը. գաւառական փտած ու հոտած քաղաքներում, նոյն իսկ մեծ գիւղերում, նկատելի է նոյն ձգտումը. այդ տեղերում ոչ մի բան արգելք չի լինում մարդկանց կերպարանափոխուելու ցանկութեանը. տեսնում էք նեղ ու հոտած փողոցներում թեթև և սիրուն կեանք վարողներին, տեսնում էք աղբակոյտի վերայ կանգնած մարդուն, որի ամեն մի շարժողութիւնը, ամեն մի խօսքը պարզ և հասկանալի պահանջ է. նոյն իսկ մի խեղճ կօշկակարը Աստուած գիտէ թէ ինչ է երևակայում իրան...

Այդպիսի տենդային արագութեամբ է մեր մէջ թափանցում ժամանակի պահանջը, այն, ինչ որ լուսաւորութիւն, յառաջադիմութիւն է կոչւում։ Այդ պահանջը այնքան խառնել, տակն ու վրայ է արել մեր մտքերը, հասկացողութիւնները, այնպիսի մեծ ուժով է ճմլել, տափակացրել մեր կամքը, որ մենք միայն մի բան գիտենք—յարմարուել ժամանակին, գնալ նորա հետ արագութեամբ։ Ցետ նայել, քիչ կանգ առնել և մտածել անցած թողածի մասին, մտածել թէ ինչ են նրանք, որ չետ են մնացել, որ չեն կարողանում առաջ գնալ, կերպարանափոխուել, հասկանալ կեանքը այնպէս, ինչպէս հասկանում են նոր հոտով, նոր համով հարբածները—այդ անկարելի է, անօգուտ է, աւելորդ աշխատութիւն է։ Ցետամնացը հին է, փտած է, ժամանակից դուրս է։ Հեռու այդ փտած, նեխուած կեանքից, այդ ճահճային անշարժութիւնից։

Բայց այդ միշտակութեան, ինքնամոռացութեան ժամանակ էլ լինում են ժամեր, րոպէներ, երբ միտքը իրանն է պահանջում, մարդը որոնում է իւր հոգու համար հանգստացնող, թարմացնող կերակուր։ Նա յոգնում է անչափ ոգևորութիւնից, նա կշտանում է սէրից և տխուր ու յուսահատ կանչում է. «այս ամենը շատ լաւ, բայց ինչով ապրել, ինչն ընտրել նպատակ, ինչով ղեկավարուել»։ Սարսափելի հարց... Մարդն իմանում է որ հոգին քաղցած է, ծարաւ է, նա որոնում է մի բան, աչքի առաջն է բերում հարիւրաւոր երևոյթներ, միշում է նրանց մանրամասնութիւնները, բայց տեսնում է որ ներքինը դրանցով չի կշտանում, ընդհակառակն, լետ է մղում, չի ուզում հաշտուել նրանց հետ։ Ուրեմն չը կայ հոգու աշխարհ, վճռում է մարդը և սաստիկ տխրած, սաստիկ ձանձրացած՝ իւր տեսած կեանքին այնպիսի անուններ է տալիս, որպիսին երբէք չի տալ «եօթն սար լետ մնացածը», այնպիսի մարդը, որ անշարժ է, այդ անշարժութեամբ պախարակուած, մոռացուած։ Նա ինքն իրան ասում է, որ այդ փալլուն կեանքը մի գեղեցիկ դատարկութիւն է, մի սիրուն անմտութիւն։ Չը կայ իդէալ, նա չը գիտէ թէ ինչը պիտի պաշտէ, ուրն է

այն սրբութիւնը, որի առաջ հոգին կը բացուի, ցոյց կը տայ գործելու, տաքանալու, ստեղծելու եռանդն ու մեծ կարողութիւնը։ Ո՛չ, այս բոլոր եռացման, այս բոլոր փայլի, շուքի մէջ միտք, հոգի չը կայ, կրկին և կրկին հաստատում է նա և լուսահատւում, կծկւում, կուչ դալիս։ Վաղուց է, որ մենք բոլորս գանգատւում ենք այդ հիասթափման վերայ, վաղուց մենք հասկացել ենք, որ մեր դժբաղդութիւնը նրանում է միայն, որ մենք իդէալ, սրբութիւն գտնել չենք կարողանում և հէնց այդ պատճառով այնքան թոյլ ենք, անզօր, կամքից զուրկ, անհաստատ, երերուն։ Խեղճ հայ երիտասարդ... Ինչեր չի արել նա, որ մի քիչ առաջ գնայ, ինչ զոհեր չի տուել ժամանակի պահանջին, ինչեր չի կորցրել իւր ոգևորութեան համար։ Նա անգիր է արել եւրոպացի հեղինակներին, անթիւ անգամ կրկնել է նրանց մտքերը. նա ատել, մոռացել է իւր մայրենի լեզուն, համարելով նրան անկարգ և անպիտան մի բան, որ անարժան է մեծ մտքերին, մեծ գաղափարներին սպասաւորելու համար։ Բաւական չէ որ ինքն է մոռացել, ատել, դեռ նոցնը սովորացրել է իւր քրոջը, իւր մօրը, որպէս զի միտքը, երջանկութիւն տուող գաղափարը ամեն կողմից գրկէ նրանց։ Եւ չը նայած այդ բոլորին, նա դարձեալ ասում է, որ իդէալ չը կայ. նա իւր արածներից, իւր իմացածից չի կարողացել մի բան ընտրել, որին հանգիստ խղճով և հոգով երկրպագութիւն տար։ Նա այդ բոլորից լնտուլ տեսնում է, որ փակած է մի նեղ, փոքրիկ աշխարհի մէջ, ուր իւր նամոլութիւնն է միայն երևում. նա միայն իրան է ճանաչում, միայն իրան է հաւանում։ Ամեն մէկի բարի ցանկութիւնն է ցոյց տալ որ ինքն այդպէս չէ, որ նա գտել է մի այնպիսի իդէալ, վերացական բարձր գաղափար, որի սրբութեան առաջ ամենքը պիտի գլուխ բաց անեն։ Բայց և այդպէս, դարձեալ նկատւում է դատարկութիւնը, դարձեալ լսւում է ամենքի բերանից. «Տէր Աստուած, միթէ աշխարհումս այլ ևս բարձր ու գեղեցիկ միտք չը կայ. միթէ իդէալը այն ստոր հաճոյքներն են, որ կլանել են մեզ»։ Որքան խղճալի դրութիւն։

Մենք այս ու այն պատին ենք զարկում մեր գլուխները, մենք տրաքւում ենք այդքան ի զուր որոնելուց։ Բայց մի անգամ չենք ուզում հասկանալ, որ այդ պաշտած իդէալը երկնքի մանանայ չէ, որ, մեր կամքը չը հարցնելով, թափւի մեր գլխին։ Ո՛չ, երկինքը այդպիսի բան անել չի կարող. միտքը, գաղափարը, իդէալը պիտի ծնի մարդկանց միջից, նրանց կեանքից, նրանց անցկացրած օրերից։ Զ'ունինք համբերութիւն, չենք կանգնում, նայում, հանգիստ կերպով հետազօտել, մաքրել ու մաքուրը վերցնել չենք ուզում, այլ ընդհակառակն, հոսանքի հետ լողալով, միայն արտաքին փայլ, դրսի սիրունութիւն որոնելով, մեզ վերայ ամենաստոր կարծիքն ունենալով, միշտ իդէալի ծարաւ կը մնանք, միշտ կը զգանք, որ մենք մի բան պիտի լինէինք, բայց մի բան չենք։ Միթէ ճիշդ է, որ մեր կեանքը ամբողջապէս մի ապականութիւն է, մի այնպիսի տգեղ բան, որից մի-երկու հատ բան

չի կարելի վերցնել և ապա դիմել դէպի լոյս, դէպի քաղաքակրթութիւն։ Մենք այս հարցը չենք տալիս մեզ, որովհետև միանգամայն մենք մեզ վատ ենք համարել, պրծելու համար՝ մի թեթև ծանօթութիւն էր հարկաւոր մեր «ունեցած-չունեցածի» հետ։ Բայց «մեղաւորին ով է տալ արքայութիւն», ասում է մեր ժողովուրդը։

Ես չեմ կարծում թէ մեզանում կը լինի մարդ, որ չի ընդունիլ թէ ինքը երբէք սիրած չէ մեր հասարակ դասի այս ու այն կողմը։ Ամենքը գիտեն, որ կայ հետաքրքրութեան արժանի ժողովրդական կեանք, բայց բաւականանում են նրանով, որ իրանք այդ բանը գիտեն։ Միմեանցից պահանջում են ուսումնասիրել այդ կեանքը, միմեանց չլինքին են դնում այդ դժուարութիւնը, կարծում են թէ այդպէս պահանջելով, կատարել են իրանց պարտքը։ Ինչու չեն տեսնում, ինչու չեն մտնում, իմանում և ամեն մէկը իւր կարողացածի չափ չի ուսումնասիրում։ Ես հաւատացած եմ, որ մեր տխուր երիտասարդութիւնը շատ բան կը գտնէր հասարակ ժողովրդի կեանքի մէջ, գուցէ այդտեղից նա կը վերցնէր իւր իդէալները, գուցէ այդ կեանքի միտքը հասկանալով նա կ'ազատէր իրան տանջող հարցից՝ թէ ինչը նպատակ ընտրել, ինչը պաշտել։ Այդ կեանքը, որ խոստանում է մեզ շատ բան հասկացնել, մեզանից հեռու է. նա գտնւում է մոռացած, կեղտոտ գիւղերում, նա գտնւում է նաև քաղաքների հեռու, անլայտ տնկիւններում։ Այդպիսի տեղերում է ապրում հայ նախնական ընտանիքը, որ դեռ ևս չի հողմահարւում ամեն կողմից։

Այդ այն կեանքն է, որը մենք ոգևորւած անուանում ենք նահապետական պարզ կեանք։

Նահապետական ասելով, մենք, ի հարկէ, չենք երևակայում այնպիսի կեանք, որ գոյութիւն ունէր Հոմերոսի ժամանակ. մենք շատ լաւ գիտենք, որ մեր գիւղերում չը կայ հին, նահապետական աշխարհի այն կենցաղը, որի պարզութիւնը, աւանդութիւնները ոգևորել են բազմաթիւ բանաստեղծական հանճարներին։ Հնութիւնից այստեղ քիչ բան է մնացել. չը կայ այն միամտութիւնը, այն պարզութիւնը, որ հնութեան հոգին էր. և մենք նահապետական ենք անուանում գիւղի կեանքը աւելի այն պատճառով, որ այդ կեանքը շատ հեռու է մնացել մեր յառաջադիմութիւնից։ Ասելով պարզ կեանք, մենք, ի հարկէ, չենք հասկանում նախնական հովւական կեանքը. պարզ ենք անուանում այն պատճառով, որ այդ կեանքը չ'ունի մեր յառաջադէմ աշխարհի անհամար պահանջները, ճաշակի խորութիւնները, մի խօսքով այն բոլոր մանր թէ մեծ ցանկութիւններն ու քմահաճութիւնները, որոնք այդ աշխարհի հոգին ու կրակն են կազմում։ Նահապետական պարզ կեանքը, որ մենք երբեմն լիշում ենք մեր գրութիւնների մէջ, երբ խօսք ենք սկսում միամտութեան, անմեղութեան և տգիտութեան մասին, ոչ այն սիրուն, դիւցազնական և ասպետական կեանքն է, որի վիշտակը, որի պատկերը մարդու անփոխարի-

նելի քաղցրութիւններից գլխաւորն է, ոչ էլ այնքան է պարզ, որ կարողանանք մի երկու գծերը ըմբռնելով ասել թէ հասկացել ենք ամեն ինչ. Ո՛չ, դա մի բարդ բան է. դորա մէջ կան մարդարիտներ, որոնց վերայ սիրահարուել կարելի է, կան և սարսափելի դառն պտուղներ, որոնցով հարիւրաւոր կեանքեր են թունաւորուում։ Դառնութիւնն ու քաղցրութիւնը այնպէս՝ սերտ կապակցութիւն ունին միմեանց հետ, որ բաժանել, մէկը կամ միւսն ընտրել անկարելի է։ Մեր կողմից դեռ բաւական աշխատութիւն է հարկաւոր դառնութիւնը քաղցրութիւնից բաժանելու համար, մեղ վերայ դեռ պարտք կայ ընտրութիւն անելու, լաւի և վատի ընտրութիւն։

Մեր նահապետական պարզ կեանքը ունի իւր զուլութեան համար մի անհրաժեշտ պահանջ, որի մէջ պարզ երևում է նորա կոչումը, նշանակութիւնը։ Այդ պահանջը աշխատութիւնն է։ Առանց ֆիզիքական, կոպիտ աշխատանքի, առանց մշտական գործունէութեան անհասկանալի է այդ կեանքը, նա հանգստութիւն չ'ունի։ Աշխատութիւն ասած բանից աւելի հասկանալի, ընդհանուր միտք չը կայ նահապետական կեանքի մէջ. ամեն ինչ—ժողովրդական իմաստութիւն, աւանդութիւններ, բազմաթիւ ծէսեր, սովորութիւններ միայն այդ աշխատութիւնը իբրև անհրաժեշտ պահանջ, իբրև կենսական խնդիր պարզելու համար է։ Աշխատութիւնն է, որ ահագին գործեր է կատարում, ընտանիք, հասարակութիւն է կազմում, մարդուն հասկացնում է այս աշխարհի միտքը, նշանակութիւնը, տուն, սեպհական շահ, զաւակ, ուրախութիւն և դառնութիւն է ստեղծում։ Աշխատութիւնը սուրբ է, աղնիւ մարդու դրամագլուխը, բարօրութեան գրաւականը իւր թափած արիւն-քրտինքն է և դրանից, լոկ դրանից, ստանում է իւր ապրուստը։ Նա ունի մի միտք, որ միակ կանգնած է նորա աչքի առաջ—ապրել, ինչպէս ուրիշներն են ապրում։ Եւ այդ մտքի համար նա հոգով ու մարմնով նուիրուում է աշխատանքին։ Նա աշխատութիւնից չի վախում, որովհետև մի ուրիշ բան չէ իմանում, որ ապրելու համար նոյն աղնիւ միտքն ունենայ, որպիսին ունի աշխատութիւնը։ Անպակման կերպով հաւատալով իւր գործին, նա անում է, աշխատում, մաշեցնում է իւր մարմինը առաջնորդ ունենալով միայն մի լոյս։ Նա գործ ունի բնութեան հետ. իսկ բնութիւնը մարդու կամքին ու ցանկութիւններին չի հնազանդուում. բնութիւնը անթիւ և անհամար արգելքներ է դնում մարդու առաջ, դժուարացնում է նորա գործը։ Բայց քանի կայ մեծ, անխախտ լոյսը, որ աշխատութեան հիմքն է, բնութիւնից ձեռք վերցնող չը կայ։ Գործի մարդը իրանն է անում, ցոյց տալով մի զարմանալի տոկունութիւն, կամքի ուժ։ Նա մեծ պահանջ չ'ունի. նա չկամ չէ. միանգամից բարձրացնել իւր դրութիւնը, աղատուել ճնշող հանգամանքներից,

ապրել աւելի անհոգ, աւելի լաւ, այնպէս, որ գոնէ իւր չարչարանքի մի մասը պակասացնէ—այդ բոլոր ցանկութիւնները նորա համար մեծ գին չ'ունին. նորա համար բաւական է անտրտունջ նստել իւր տանը և գոհ սրտով ասել թէ իւր երեխան, իւր ընտանիքը կուշտ է։ Ահա այն վերջնական նպատակը, որին ծառայում է նահապետական մարդը։ Այդքան աշխատել, այդքան զրկանք կրել, գառն արտասուք, առատ քրտինք թափել իւր ընտանիքի ամբողջութեան, բարի օրայ համար—այս է սուրբ դաղափարը։ Ընտանիքը—այս է այն որոշ, աչքի առաջ կանգնած կենդրոնը, որ դէպի իրան է ձգում մարդկանց ուժերը, միտքը, հասկացողութիւնը։

Ինչպէս ուզում է, թող լինի, ուրախութեամբ թէ տրտմութեամբ, լաջողութեամբ թէ բիւրաւոր ցաւեր կրելով, բայց ամեն մէկն աշխատում է ընտանիքի օգտին։ Անձնական ոչինչ չը կայ իւրաքանչիւր անդամի համար. անձնաւորութիւնը, «եսը» մոռացւում է ընտանիքի շահերի առաջ։ Աշխատում, հաւաքում են մեղուների պէս։ Մէկը արտից է մի ջալ ցորեն բերում, միւսը իւր ծախած մի բեռն փայտից մի քանի կոպէկ, մի ուրիշը օտարի դրանը արած ծառայութեան վարձը. այդ բոլորը գուցէ չնչին, աննշան արդիւնքներ են, բայց հալալ աշխատանք են, որ միատեսակ եռանդով, լօժարութեամբ հաւաքւում է միասին. ամեն մէկն իւր պարտքը կատարում է, իւր բաժինը ներս բերում և այնուհետև իւր բաժնի տէրը չէ. այդ ժողովածուն, մատների ծայրերով մի կերպ հաւաքածը ամբողջ ընտանիքի սեպհականութիւնն է։ Աչքի առաջ կայ մի ընդհանուր մերկութիւն, որ պիտի ծածկւի անխտիր. ամենքը գիտեն մի քաղցածութիւն, որ պիտի վերացւի տանից։ Էլ չեն հարցնում թէ ով է արժանաւորը կամ անարժանը, ով է շատ բերել և շատ ստանալու իրաւունք ունի։ Ամենքը հաւասար են, ամենքը միատեսակ ծառայ են, որ պիտի խոնարհւին այն առողջ և ամբողջ մարմնի առաջ, որ ընտանիքն է։

Սակայն, ընտանիքը մենակ դրսի բերածով չէ կենդանի. ոչ, ընդհակառակն, դրսից այդպիսի հնազանդութեամբ բերելը, ամեն կոչտ և ուժասպառ աշխատանքի լանձնառութիւնը հաստատ և անխախտ է լինում ներքին ուժի ազդեցութիւնից։ Ընտանիքն ունի և մի բարդ, ներքին կեանք, որ նոյնպէս աշխատութիւն է պահանջում, նոյնպէս կենդանի է միայն աշխատութեան շնորհիւ։ Թէև դրսի աշխատութեան տէրը տղամարդն է, իսկ ներքինի տէրը—կինը, բայց աշխատութեան լատկութիւնն այնպէս է, որ երկուսն էլ խառնւում են միմեանց հետ, մի և նոյն աշխատաւորներն են պահանջում։ Տղամարդը և կինը ձեռք ձեռքի տուած են կատարում այն, ինչ պահանջում է կեանքը։ Տղամարդը անխոնջ աշխատում է, կինը նրանից պակաս բաժին չ'ունի աշխատութիւնից։ Մեր քաղաքակրթւած կեանքը կնոջը հեռացնում է ծանր աշխատանքից, տալիս է նրան միջոց հանգիստ ու անհոգ ապրելու, որովհետև այդ կեանքում կինն ունի իւր նշանակութիւնը, իւր կոչումը. նա պիտի պատկերացնէ քնքշութիւնը, որ թուլութեան

և անկարողութեան է հասնում. նա պիտի գեղեցիկ լինի, պիտի սրտի լարեր շարժէ, պիտի մարդ զարմացնէ, լաւիչտակութիւն պատճառէ իւր թեթև, օդային կաղմուածքով, իւր «նազ ու սադով»։ Բայց նահապետական կինը բոլորովին այլ կոչում ունի։ Նորա վերայ ծանրանում է ահագին լուծը. նա մայր է, տանտիկին է, նա և տղամարդ է, երբ տղամարդը կամ բացակայ է, կամ թէ հիւանդ, մեռած։ Նա այնքան աննշան անձնաւորութիւն չէ. նա ինքն է, որ կապում է ընտանիքի անդամներին միմեանց հետ, նա ինքն է, որ պահում է տունը, այն մեծ բանը, որ օջախ է կոչւում։ Չը նայելով այդ մեծ գերին, նա չ'ունի զուռզութիւն, ինքնահաւան չէ և բոլորովին այն միտքը չ'ունի, թէ իւր դոյութիւնը ընտանիքի միւս անդամներից շատ գերազանց է, թէ առանց իրան մնացածները չեն կարող ապրել։ Նա ընկեր է իւր տղամարդին, բառի բուն նշանակութեամբ։ Ամեն օր, ամեն մի քայլում պատահում են դէպքեր, որոնք այդ են հաստատում. ես կը բերեմ մի դէպք։

Մի սարսափելի վատ օր ես ճանապարհորդում էի Սիւնեաց երկրում։ Ձիւնախառն անձրևը թափւում էր անդադար և նրանից ծածկւելու համար բաւական չէին ոչ անձրևակալը, ոչ էլ «եափունջին». մանաւանդ անտանելի էր Սիւնեաց աշխարհի հռչակած ցեխը, որ անասելի տանջանք էր պատճառում ձիուն. նորա ոտները կամ խրւում էին մինչև ծնկները, կամ սահում էին երկար տեղ և նա զօռով էր պահւում վայր ընկնելուց։ Այդպիսի մի օր ես տեսայ մի կնոջ, որ գնում էր ոտաբոբիկ մի ձիաւոր տղամարդի հետ։ Կինը բաւական նեղացած էր երևում, քըրտնած այդ դժւար ճանապարհից. այն ինչ տղամարդը հանգիստ նստած էր ձիու վերայ, փաթաթւած կնոջ կարմիր շալի մէջ և դեռ ժպտում էլ էր։ Ես հարցրի և իմացայ, որ նա այդ կնոջ ամուսինն է. և երբ լանդիմանեցի նրան, որ տղամարդ լինելով ձի է նստել, հարկադրելով կնոջը այդպիսի տանջանքներ կրել, նա շարունակեց ժպտալով ինձ նայել. իսկ կինը նորա փոխարէն հասկացրեց ինձ, որ ինքն էլ է այդ ձիու վերայ նստել երկար տեղ, բայց որովհետև իւր տղամարդը նեղացել է, այդ պատճառով հիմա էլ ինքն է ոտով գնում, որ մարդը հանդստանայ։ Այդ բաւական չէր, նա ինձ հասկացրեց, որ ձի նստած մարդը առհասարակ հեշտ է մրսում, ուստի ինքը իւր դլխի շալը վերցրել է և նրանով իւր մարդուն փաթաթել։ Նա այդ պատմում էր առանց տրտունջի, նորա խօսքերը հասարակ էին, զանգատ չէին լայտնում, իսկ տղամարդի ժպիտը—ես լետոյ հասկացայ—արտայայտում էր զարմանք՝ թէ ինչպէս է, որ ես չեմ հասկանում այդպիսի հասարակ բանը։ Նոյն օրը ես տեսայ գիւղերի մօտ հայ կանանց, որոնք սարսափելի ցեխը կոխ տալով, այս ու այն կողմն էին գնում. նրանք շալակած էին փայտ, մեծ մեծ կողովներով դարման, ջուլներով չոր խոտ։ Ոչ, մտածում էի ես, նահապետական կինը բոլորովին ուրիշ կոչում ունի, բոլորովին ուրիշ դեր է խաղում ընտանիքում։

Նա մեծանում է, իւր հոր տանից ուրիշի տուն է գնում իբրև օտար մարդու կին, տանելով իւր հետ այն միտքը, որ նա օգնական պիտի լինի իւր տղամարդին, մասնակից պիտի լինի նորա աշխատութեան։ Աշխատութիւնը շատ ձեռքեր է պահանջում. որքան մեծ է ընտանիքի կազմածը, նորա տարած գործը, այնքան շատ պիտի լինի օգնողների, անողների թիւը։ Ունենալով այսպիսի առաջնակարգ կենսական նշանակութիւն, աշխատութիւնը մի և նոյն ժամանակ այն փորձաքարն է, որի միջոցով կինը կամ աղջիկը ցոյց է տալիս իւր գեղեցկութիւնը, իւր հրապուրը։ Երիտասարդը իւր ծնողների կամքին հնազանդելով, շտապում է տուն բերել մի նոր գործող ոյժ,—այդ իւր կինն է, որ մեծ մասամբ անչափահաս աղջիկներից է լինում։ Ինչով է նա առաջնորդում իւր ընտրութիւնների ժամանակ։— Ըստ մեծի մասին նրանով, թէ որքան է աղջիկը համապատասխանում այն նպատակին, որին նա պիտի ծառայէ մինչև կեանքի վերջը, այսինքն որ աստիճան դիմացկան է, որքան կարող է աշխատել։ Քաղաքացի երիտասարդն էլ երբեմն անչափահաս աղջիկ է նշանում. բայց նա ինչ գաղափար ունի այդ աղջկայ վերայ։—Ոչինչ. նա գիտէ միայն, որ այդ աղջիկը մի օր իւր կինն է դառնալու, հէնց այդ պատճառով նա տքնում, աշխատում է ամեն կերպ, որ կարողանայ նորա սիրտը յափշտակել։ Դեռ այդ ժամանակ նրան տանջում է այն միտքը, թէ ինչպէս պիտի լինի, որ կինը տաք կերպով կապի իւր հետ, միայն իրան ճանաչէ։ Ուրիշ մի միջոց չը կայ, նա սկսում է զարմացնել նրան իւր հարստութիւններով, իւր առատաձեռնութեամբ և այլ այսպիսի յատկութիւններով, որոնք այս աշխարհի հասկացողութեամբ ամենագեղեցիկ, խնկելի բաներն են։ Նա բերում է անչափահաս երեխայի համար ոսկի մատանիներ, քորոցներ, մանեակներ, շլացնում է խեղճ անչափահասին ազնիւ մետալի փայլով, թանկագին քարերի շողշողացով, սովորացնում է նրան չը հաւանել իրեղէններից մէկը, լետ դարձնել, նորից աւելի լաւը բերել տալ։ Իսկ երբ մի քանի անդամ այդպէս կրկնելուց յետոյ անչափահաս նշանածը, տեսնելով իւր չորս կողմը ուրախ և սիրող դէմքեր, մի քիչ խստութեամբ է պահանջում նորը, լաւն առնել, աւելի սրամիտ կերպով է ծաղրում իւր չը հաւանած իրեղէնը,—փեսան հրճւում է, ինքն իրան բաղդաւոր է անուանում և ասում է, որ իւր սրտի բաղձանքը կատարւել է։ Այն ինչ գիւղացի երիտասարդը աչքի տակով նայում է, դիտում թէ իւր ապագայ ամուսինը ինչքան «հալալ ծծկեր է», այսինքն ինչպէս է չինում, սարքում, որքան ուժեղ է, որքան դիմացկան։ Նա այն ժամանակն է ուրախանում, այն ժամանակն է մի նշանած երիտասարդի քաղցր յոյսերի մէջ ընկնում, երբ, օրինակ, տեսնում է հեռուից, որ աղջիկը ջրով լիքը մեծ կուժը չալակած՝ տղամարդի պէս տուն է տանում կարմրած, բայց առանց քրտինքի, հաստատ և ամուր քայլեր անելով։ Այդ քաղցրութիւնն է համապատասխանում քաղաքակրթած երիտասարդի վայելած վերև նկարա-

գրած քաղցրութեանը։ Այդ քաղցրութիւններից որն է բաղդաւորութեան հասցնում։ Ոսկու և ադամանդի փայլին սովորած աղջիկը, ամուսին դառնալուց յետոյ, իւր ճաշակն է զարգացնում. Նորա ուշն ու միտքը այդ անսակ թանկագին իրերի վերայ է մնում. Նա իւր ամբողջ մտաւոր կարողութիւնը փայլեցնում է աչքի ընկած ամեն զգեստի, պաճուճանքի քննադատութեան մէջ. Նա ստանում է մի զարմանալի ընդունակութիւն՝ ոչ մի բանի չը հաւանելու, ամեն ինչ ծաղրելու։ Հիմա տեսէք գիւղացի Նորահարսին։ Համարեա բոլոր գիւղերի հեռաւոր ծայրերում կարելի է տեսնել գետնափոր խորշեր, որոնց առաջին անգամից չը գիտես թէ ինչ անուն տաս. խողի բո՞յն անուանես թէ հին, անուշադիր թողած դարմանանոց։ Բայց իրօք դրանք մարդկային բնակարաններ են, այդտեղ են ապրում Նոր կազմուած ընտանիքները։

Քիչ հետևենք այդ Նորակազմ ընտանիքներին։

Մենք տեսանք, որ գիւղացու բարօրութիւնը, տնտեսական կարողութիւնը ընտանիքի ամբողջութիւնից է կախուած։ Քանի որ մի յարկի տակ ապրում են մի քանի մարդիկ, քանի որ այդ մարդկանց մէջ կայ միասին ապրելու ցանկութիւն, այդ ընտանիքը մի կենդրոն է, որի գոյութիւնը անհնարին է առանց փոխադարձ համերաշխութեան, առանց սերտ կապակցութեան։ Հէնց որ թուլանում է կապը, հէնց որ խզւում է մի տեղ հաւաքող շաղկապը, ընտանիքի ծոցից դուրս է գալիս մի հատուած, որ իսկոյն բոյն է դնում մի ուրիշ տեղ, իսկոյն կազմակերպւում է նոյն սկզբունքների վերայ և հաստատ հիմք է բռնում։ Այդ բաժանումը ինկապէս ընտանիքի նշանակութիւնը, ոյժը չի թուլացնում. եթէ վնասւում է տընտեսական կողմը, բայց բաժանուածները դրանով չեն փոխում իրանց յարաբերութիւնը դէպի այն տեղը, ուր օր ու գիշեր բնակւում են։ Բաժանւողները ըստ մեծի մասին Նոր պսակուածներն են լինում։ Նրանք են, որ չ'ունենալով կարողութիւն, առաջին անգամ հաստատւում են մեր յիշած գետնափոր խորշերում։ Սկզբում կեանքը այդ տեղերում վերին աստիճանի աղքատ է, յուսահատութիւն պատճառող, շատ անգամ չոր անգամ չը կայ, որ ծածկւեն ու քնեն։ Բայց օրէցօր նկատելի է լինում փոփոխութիւն դէպի լաւը։ Գետնափոր խորշը հետզհետէ ընդունում է բնակարանի տեսք, հետզհետէ մաքրւում է, տաքանում և մի քանի տարուց յետոյ արդէն մի օրինաւոր օջախ է դառնում։ Այդ գործի մէջ ամենամեծ ծանրութիւնը Նորահարսի վերայ էր։ Տղամարդը իւր աշխատութիւնն էր տանում, այդ ճիշդ է, բայց կինն էր, որ համ ներսումն էր աշխատում, համ էլ դրսում երկպատիկ, եռապատիկ շատ էր աշխատում, միանգամայն տղամարդի անելիքն էր անում, որպէս զի աշխատողը մէկը չը լինի, այլ եթէ հնարաւոր է՝ երկուսով երեք աշխատաւորի գործը կատարեն։ Ահա այդպէս թոյլ և անօգնական ընտանիքը հետզհետէ զօրեղանում է, հաստատւում, տիրանում է մի յայտնի աստիճանի անկախութեան և անցնում է միւս սովորական ընտանիքների կարգը։

Նահապետական պարզ ընտանիքում կինը և առհասարակ ամենքը, որ տանն են նստում, ազատ չեն դրսի հանգամանքների ազդեցութիւնից, նրանք էլ կրում են այն ամենը, ինչ կրում է դրսում գործող տղամարդը։ Վճռական րոպէներում, արտաքին աշխարհի պահանջները ամբողջ ընտանիքի վերայ են ընկնում և ոչ միայն տղամարդի վերայ, թէև տղամարդն է այն միակ անձը, որ պատասխանատու է պահանջողների առաջ։ Պէտք է հարկերը վճարել, խստութեամբ պահանջում են, չետաձգելու իրաւունք չեն տալիս, իսկ փող չը կայ։ Միւս կողմից տան տղամարդը պարտքի տակ է, վաշխառուն վաղուց է յայտնել թէ վճարելու ժամանակն է և այժմ կաշի է քերթում, ամեն օր մի հրապարակական խայտառակութիւն է անում։ Ի՞նչ պատասխան պէտք է տալ հարկահանին կամ վաշխառուին։ Ինչպէս և լինի պատասխանը, բայց նա միայն տղամարդին չի վերաբերում. նրանց առաջն են դուրս գալիս ընտանիքի բոլոր անդամները, խայտառակչութիւն, ծեծ, հայհոյանք—այդ բոլորը միասին են ստանում։ Եւ միասին էլ հոգում են իրանց ցաւերը։ Ցեսնում ես, ամբողջ ընտանիքը մի և նոյն կերպով սկսում է աշխատել, պակասեցնում է իւր ծախքերը. ամենքը լուռ ու մունջ իրանց կաշին են քերթում որ պարտքից, պատուհասից ազատուեն։ Ամեն մէկն իւր բաժինն է դնում. մինչև անգամ տասն տարեկան աղջիկն էլ իւր գործած մի ջուխտ գուլբան է մէջ տեղ բերում, իսկ նրանից քիչ մեծ տղան մէկի ծառան է դառնում, կոպէկներ հաւաքում։ Տան տղամարդի վերայ ընկած ծանրութիւնը, ինչպէս տեսնում էք, ալ ես այնքան չի ցաւացնում նորա մէջքը։ Գիւղացի կինն ինքն է ասում թէ տղամարդի մէջքը բարակ կը լինի։ Բարակ մէջքը շատ բանի չէր դիմանալ, շուտ կը կոտրէր, եթէ միշտ մենակ մնար։ Բայց այդ մէջքը պահում է, չի կոտրում, որովհետև կինը, որ գիտէ մէջքի բարակութիւնը, գիտէ նաև թէ ինչպէս պիտի լինի, որ մէջքը հաստանայ, դիմանալու կարողութիւն ունենայ։ Դորա համար նա ուրիշ միջոց չ'ունի, նորա գիտեցածն այն է, որ այդ թանկագին մէջքին պիտի օգնութիւն տայ իւր սեպհական մէջքը։ Այդպէս անելով, նա տղամարդին ընդ միշտ չի ազատում ծանրութիւնից, այլ թեթևացնում է այն բեռը, որ տղամարդը կրում է իւր ընտանիքի համար։

Նահապետական ընտանիքում տղամարդը մեր երեակայածի չափ բռնաւոր չէ։ Նա, ճշմարիտ է, ընտանիքի տէրն է. նրան պատում են, նրան հնազանդւում են. նրան համարում են տան արեգակ, նորա արևոմն են երդում։ Բայց տղամարդը միայն ընտանիքի տէրն է և ոչ մի ինքնակալ բռնաւոր, որի կամքին պիտի «մատաղ գնան» բոլորը, որի ցանկութիւնից է կախւած այս կամ այն կերպ գործ տեսնելը, ընտանիք պահելը։ Նա ընտանիքի անդամների հետ խորհրդակցելով է գործում. եթէ չ'ունի հայր կամ եղբայրներ, հաճութեամբ խորհրդի է նստում իւր կնոջ, իւր մօր հետ։ Ընտանեկան խորհուրդները շատ լաճախ են կայանում. ամեն մի շատ

թէ քիչ նշանաւոր դէպք, ամեն մի հարց այդ խորհուրդների առարկան է դառնում։ Մանաւանդ պատկառելի են այդ խորհուրդները այն տներում, ուր կան ծերունի նահապետ և մի քանի եղբայրներ։ Ընտանիքի անդամների մէջ ծածուկ բան չէ մնում. ամենքին ձայն է հասնում, ամեն մէկը իրաւունք ունի կարծիք յայտնելու։ Թէև ժողովրդի հասկացողութիւնն է, որ տարիները աւելացնում են մարդու խելքը, հմտութիւնը և այդ պատճառով վճռական խօսքը տարիքով մեծին է պատկանում, բայց և այդպէս փոքրահասակն էլ խօսելու, ձայն բարձրացնելու իրաւունք ունի, եթէ միայն նա յայտնի է իբրև ընտանիքի համար աշխատող, նորա շահերը միայն ի նկատի ունեցող մարդ։ Խորհում են, վճռում են մի բան և անում են այնպէս, ինչպէս «խելք խելքի տալով» են վճռել։ Միմեանց շատ քիչ են հակառակւում, շատ քիչ են ընդդիմանում. նրանք բոլորը դիտեն, որ զատ զատ մարդիկ չեն, այլ հաւասար պարտականութիւն ունեցող անդամներ մի մեծ և սուրբ հիմնարկութեան, որ օջախ է սւում։

Օջախ—ահա այն քարը, որի վերայ հաստատուած է նահապետական ընտանիքը։ Դա մի բարդ հասկացողութիւն է. դա մի սրբութիւն է, որ բաղմած է ընտանիքի մէջ, ընտանիքի սիրտն է, նրան հոգի, կենդանութիւն տուողն է։ Օջախի սէրից բարձր, վաւերուն սէր չը՝կայ նահապետական աշխարհում։

Նահապետական հայ կնոջ մասին մեր տուած տեղեկութիւնները դեռ նրան ամբողջապէս չեն լուսաւորում, չեն պարզում նորա էութիւնը։ Եթէ ուզում ենք լաւ իմանալ թէ ինչ է հայ կինը, պիտի ուսումնասիրենք թէ ինչ բան է օջախը։

Ուրեմն մեր կարողացածի չափ ծանօթացանք այդ ընտանեկան սրբարանի հետ։

Լ Է Ո